ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք.Երևան, Մամիկոնյանց 46/5

«19» 12 2025 թ. N 289-Լ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 91-Լ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հանձնարարում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի հոկտեմբերի 1-ի «Խափանման միջոցներ կիրառելիս տեղեկատվությունը տրամադրելու մասին» թիվ 91-Լ հանձնարարականում (այսուհետ՝ հանձնարարական) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) հանձնարարականի 1-ին կետի 4-րդ ենթակետի վերջակետը փոխարինել միջակետով.

2) հանձնարարականի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով.

«5) «Բացակայելու արգելք» խափանման միջոցն այլ խափանման միջոցով (բացառությամբ կալանքի, տնային կալանքի և վարչական հսկողության) փոխելիս՝ նոր խափանման միջոց ընտրելու հիմքերը նախապես համաձայնեցնել Հայաստանի

Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալի, իսկ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի հետ:

Սույն ենթակետով նախատեսված դեպքերում մեղադրյալին կարող է վերադարձվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը»:

2. Սույն հանձնարարականն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին և մյուս ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ